10.57192/18291864-2024.4-230

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ

Յուրի Ավետիսյանի «Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն» գրքի մասին*

Բանալի բառեր – նոր մեթոդ, հարցի պատմություն, տեսակետ, լեզվի ժամանակակից վիճակ, ձևաբանական համակարգ, դասագիրք, հետազոտություն:

Հայոց լեզվի ձևաբանությունը ներկայացնող վերջին դասագրքից հետո հետազոտության այս ոլորտում շուրջ կես-դարյա լռությունը խախտվեց համանուն նոր գրքի հրատարակությամբ[1]: Եվ սա ոչ թե ընդամենը հերթական գրքի լույս ընծայման իրադարձություն է հայերենագիտության մեջ, այլ գիտական առաջընթաց. գիրքը ասես պաշտոնապես ազդարարում, հաստատում է այն, որ հայոց լեզուն իր գոյության նոր շրջափուլն է ապրում:

Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության մասին նոր աշխատությունը հետաքրքրական է և՛ գիտական, և՛ կրթական տեսանկյուններից: Այն միավորում է հայերենի ձևաբանության ուսումնասիրության դաշտում ստեղծված ավանդույթներն ու նոր ժամանակների լեզվական թելադրանքը՝ հնարավորություն տալով ժամանակակից ընթերցողին նոր տեսանկյունից նայելու մայրենիի ձևաբանական համակարգին՝ հայացքը չկտրելով նրա պատմությունից:

* Ընդունվել է տպագրության 27.12.2024:

[1] Տե՛ս **Ավետիսյան Յու.,** ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., «Զանգակ» հրատ., 2024:

Հեղինակը խորապես վերլուծում և համակարգում է լեզուն՝ հիմնվելով անցյալի ուսումնասիրությունների հարուստ ժառանգության վրա, բայց հաշվի առնելով ժամանակակից գիտական մեթոդները, գործիքները և լեզվի ժամանակակից բնական վիճակը: Աշխատությունը կազմված է գիտական լուրջ փորձառությամբ, լեզվագիտական նուրբ ինտուիցիայով և լեզվաբանության վերջին տվյալների արդյունավետ կիրառությամբ: Դա Յուրի Ավետիսյանի գիրքը առնվազն ներկայումս դարձնում է եզակի և արժեքավոր լեզվաբանների, ուսուցիչների, ուսանողների և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են լեզվի կառուցվածքով և ներուժով:

Որքան էլ հաջողված լինեին հայերենի ձևաբանության վերաբերյալ նախորդ ձեռնարկները, միևնույնն է, լեզվի զարգացման օրինաչափ պարբերականությունը պահանջում է համապատասխան ընդառաջ աշխատանք՝ ի հայտ եկած նոր իրողություններն արձանագրելու, առաջացած երկձևությունները կանոնարկելու, «հին ձևերից լեզվական հարացույցը մաքրելու և, այս բոլորից շղթայաձև բխող, լեզուն կրողի և կիրառողի խոսքի որակն ու լեզվագիտակցումը բարձրացնելու համար»[2]:

Ձևաբանությունը լեզվի ողնաշարն է. այն չի կարելի թողնել անխնամ՝ այդպիսով առհասարակ լեզուն դատապարտելով հետզհետե աղավաղման: Մաշվածության որոշակի աստիճանի դեպքում ձևաբանությունը՝ որպես ողնաշար, պարզապես կդադարի ըստ արժանվույն իրականացնել իր առաքելությունը: Այն ինքնին փոխվում է, ընդունում իր բնական ձևերը, հարմարվում արտաքին իրականությանը և արտացոլում ժամանակի իրողությունները, սակայն հենց որպես բնականություն էլ լեզվի ձևաբանությունը ենթակա է մասնագիտական ճիշտ վերահսկման՝ լեզվակրի և սեփական լեզվի համակարգի միջև անջրպետումից խուսափելու համար[3]:

Յուրաքանչյուր դարաշրջան իր մատնահետքն է թողնում լեզվի մեջ՝ ավելացնելով կամ ակտիվ գործածությունից դուրս թողնելով բառեր և քերականական կառուցվածքներ: Ավելացողները իմաստավորման և գոյության արդարացման կարիք են զգում, դուրս մնացողները՝ հեռացվելու հիմնավորում: Բացի լեզվի զարգացումից՝ զարգանում է նաև գիտությունը, և յուրաքանչյուր ժամանակաշրջան լեզուն ուսումնասիրելու նոր մեթոդներ ու գործիքներ է առաջարկում: Ուստի ձևաբանության մասին նա-

[2] **Bauer L.,** Introducing morphology, Cambridge, 2003, p. 11.

[3] Տե՛ս **Spencer A**., Morphological theory: an introduction to word structure in generative grammar, Cambridge, 1991, էջ 32.

խորդ աշխատությունները ոչ միայն իրենց բովանդակային, այլ նաև մեթոդական կողմից արդեն վաղուց կարիք էին զգում արժանի փոխարինողի: Նոր ժամանակները պահանջում են լեզուն դիտարկել նոր տեսանկյուններից, տեսնել, թե ինչպես է լեզուն գործում նոր պայմաններում, ինչպես է այն արձագանքում գլոբալիզացիային, տեխնոլոգիական փոփոխություններին և մշակութային գործընթացներին: Առանց նման աշխատանքների՝ գիտությունը զրկվում է արդիականությունից, իսկ լեզվի ուսուցումը, յուրացումը՝ համակողմանիությունից:

Այս ամենից արդեն պարզ է, թե ինչու են նմանատիպ գրքերը դանդաղ պարբերականությամբ ի հայտ գալիս: Ձևաբանական ուսումնասիրությունները պահանջում են լեզվի քերականության պատմության լուրջ քննություն և լեզվի ժամանակակից վիճակը կառուցվածքայնացնելու հմտություն: Ճիշտ է նաև այն, որ ձևաբանական փոփոխությունները լեզվում դանդաղ են տեղի ունենում, ուստի բնական է, որ այս հարթությամբ լայնածավալ հետազոտությունները տասնամյակների դադարներով կարող են հրապարակվել: Բայց լեզվի ընդհանուր ձևաբանությունը արտացոլող աշխատությունը մեծագույն պատասխանատվություն է, քանի որ ցանկացած սխալ կարող է խեղաթյուրել լեզվի հարացույցը[4]: Եվ լեզվաբանը պետք է ունենա մասնագիտական այնպիսի նրբազգացություն, որ հիշյալ տեսակի աշխատությունը թողարկվի ճիշտ ժամանակին, այլ ոչ թե հետ ընկնի լեզվի զարգացումից կամ նրանից առաջ անցնելով՝ արհեստականորեն արագացնի մի հարացույցից անցումը մյուսին: Առաջին դեպքում աշխատությունը պարզապես կդառնա ընդամենը հերթական հետահայաց դիտարկում, երկրորդ դեպքում՝ կլինի պարզապես անգործածական՝ իրականությունից կտրվածության պատճառով:

Յուրի Ավետիսյանի «Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն»-ը վերոնշյալ բոլոր կետերով արժանավոր աշխատություն է՝ մտածված, կառուցիկ, զուսպ, գիտական զգուշավորության ու համարձակության ճշգրիտ համակցումով հետազոտություն: Աշխատանքը կառուցվածքային առումով՝ խիստ կոկիկ և տրամաբանված է. յուրաքանչյուր թեմայի տեսությունն ուղեկցվում է հարցի պատմության հիշատակումով, որը ներկայացվում է «Տեսակետ»[5] ենթամասով, կարևոր միջարկային տեղեկություններով, որ ներկայացվում է «Ծանոթագրություն» ենթամասով, լրացուցիչ բացատրություններով, որոնք տրվում են տողատակային ձևաչա-

[4] Տե՛ս **Haspelmath M., Sims A.**, Understanding morphology, London, 2010, էջ 114-116:

[5] Տե՛ս, օրինակ, **Ավետիսյան Յու.**, նշվ. աշխ., էջ 31 և հաջ., որտեղ համապարփակորեն ներկայացվում են խոսքի մասերի դասակարգման վերաբերյալ եղած մոտեցումները:

փով, ինչպես նաև յուրաքանչյուր թեմայի վերջում տրվում է առնչվող գրականության ցանկ ու «Հարցեր և առաջադրանքներ», ինչի շնորհիվ՝ գիրքը հատուկ արժեքավոր է հայոց լեզվի ձևաբանությունը ուսումնասիրելու և յուրացնելու հարցում: Այս իմաստով՝ աշխատանքը ձեռք է բերում լուրջ դասագրքային նշանակություն:

Գիրքը ներառում է տերմինացանկ, ինչը դյուրացնում է որևէ հասկացության վերաբերյալ սույն մեծածավալ նյութից՝ ինչ-որ մասնավոր իրողության մասին տեղեկանալու ընթացքը ինչպես սկսնակ հետազոտողի համար, որը դեռ հմուտ չէ եզրույթները ըստ թեմատիկ պատկանելության որոնել-գտնելու հարցում, և՛ փորձառու ուսումնասիրողին, որը կարող է պարզապես ժամանակ չունենալ հանուն մեկ հասկացության՝ ամբողջական տեսությանը ծանոթանալու:

Աշխատության կառուցվածքն ու բովանդակային լուրջ ընդգրկումը իսկապես թույլ են տալիս այն լիարժեքորեն կիրառել որպես բուհական դասագիրք, որովհետև ներառում է ոչ միայն տեսական լայնածավալ նյութ՝ տվյալ ձևաբանական իրողության վերաբերյալ պատմական տեսակետներից ընդհուպ մինչև հնացած ձևերի և նորերի, զուգաձևությունների տարանջատում և զտում, այլ նաև գործնական և հետազոտական աշխատանքներ իրականացնելու գործիքներ, օրինակ՝ գրքի վերջում ներկայացված «Ձեկուցումների և ռեֆերատների թեմաներ» [6] մասը կամ «Գրականություն» մասում առանձնացված «Բառարաններ» ենթամասը: Տեսությունը հիմնավորված է առատ գործնական նյութով և օրինակների մեծ քանակությամբ, որոնք ոչ միայն գեղարվեստական գրականության նմուշներ են, այլ նաև կենդանի լեզվից մերբերվող օրինակներ: Հատկանշական է, որ բուն ձևաբանական նյութը գիտական ճաշակավորությամբ համադրված է բոլոր այն մակարդակների բնութագրության հետ, որոնց առնչվում է լեզվի ձևաբանական կողմը՝ իմաստաբանությունից մինչև նույնիսկ լեզվափիլիսոփայություն, ճիշտ այնպես, ինչպես լեզվի կառուցվածքային կողմը մեկուսացած չէ նրա օբյեկտիվ բովանդակային և սուբյեկտիվ լեզվամտածական աշխարհներից:

Եզրակացություններ

Այս գրքի թողարկումը իրողություն է, որն ընդգծում է, թե որքան կարևոր է լեզվական հետազոտություններում շարունակականությունը

[6] Տե՛ս **Ավետիսյան Յու.**, նշվ. աշխ., էջ 313 և հաջ.:

պահպանելը և զուգահեռաբար՝ ժամանակին համընթաց քայլելը: Այն կդառնա հետագա հետազոտությունների հիմք, դասավանդման գործիք և խորհրդանիշ առ այն, որ լեզուն շարունակում է ապրել, փոխվել և ոգեշնչել:

Յու. Ավետիսյանի «Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն»-ը սոսկ գիտական աշխատանք չէ, այլ ներդրում է մեր լեզվական մշակույթի, լեզվական ինքնության և լեզվի պահպանման գործում:

Սիրանուշ Գ. Հովհաննիսյան
Բանաս. գիտ. թեկնածու

Սիրանուշ Գ. Հովհաննիսյան – գիտական հետաքրքրությունների շրջանակում են նյարդալեզվաբանության, հոգելեզվաբանության, կլինիկական լեզվաբանության, լեզվանշանագիտության, մարդաբանական լեզվաբանության հարցերը: Հեղինակ է 20-ից ավելի գիտական հոդվածների, մենագրության, գեղարվեստական երկերի, թարգմանության և գրախոսությունների:

Էլ հասցե՝ siranush.hovhannisyan@ysu.am

Summary

THE MORPHOLOGY OF THE ARMENIAN LANGUAGE NOWADAYS
The book "Modern Armenian Language: Morphology" by Yu. Avetisyan

Siranush G. Hovhannisyan
Ph.D in Philology

Key words - new method, history of the issue, point of view, current state of language, morphological system, textbook, research

After the last textbook presenting the morphology of the Modern Armenian language, almost half a century of silence in this field of research was broken by the publication of a new book of the same title. It is also true that morphological changes in language occur slowly, so it is natural that large-scale studies in this dimension can be published intermittently for decades. Yuri Avetisyan's "The Modern Armenian Language: Morphology" is a worthy work in terms of content

and structure - thoughtful, structured, restrained, with an accurate combination of scientific caution and courage, a study that has important scientific and educational value at the present stage of the Armenian language.

The structure, serious content and rich practical material with examples in this book really make it possible to fully use it as a university textbook, since it includes not only extensive theoretical material, from historical views on this morphological reality to the separation and filtering of outdated forms and new combinations, but also tools for conducting practical and research work, for example, the section "Topics of Reports and Essays" presented at the end of the book, or the "Dictionaries" section highlighted in the "Literature" section.

Резюме

МОРФОЛОГИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА В НАШИ ДНИ

О книге «Современный армянский язык: морфология» Юрия Аветисяна

Сирануш Г. Оганесян

Кандидат филол. наук

Ключевые слова - новый метод, история вопроса, точка зрения, современное состояние языка, морфологическая система, учебник, исследование.

После выхода последнего учебника, посвященного морфологии современного армянского языка, почти полувековое молчание в этой области исследований было нарушено публикацией новой книги с таким же названием – «Современный армянский язык: морфология».

Морфологические изменения в языке происходят медленно, поэтому вполне естественно, что крупномасштабные исследования в этом направлении могут публиковаться с перерывами в течение десятилетий. Книга Юрия Аветисяна «Современный армянский язык: морфология» является достойной работой с точки зрения содержания и структуры - вдумчивой, структурированной, сдержанной, с точным сочетанием научной осторожности и смелости, исследованием, имеющим важное научное и образовательное значение на современном этапе развития армянского языка.

Структура, серьезное содержание и богатый практический материал с примерами в этой книге действительно позволяют в полной мере использовать ее в качестве вузовского учебника, поскольку она включает в себя не только обширный теоретический материал, от исторических взглядов на

определенную морфологическую реальность до разделения и фильтрации устаревших форм и новых сочетаний, но и инструменты для проведения практической и исследовательской работы, например, раздел «Темы докладов и эссе», представленный в конце книги, или раздел «Словари», выделенный в разделе «Литература».

Օգտագործված գրականություն

1. **Ավետիսյան Յու.,** Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., «Զանգակ» հրատ., 2024:
2. **Bauer L.,** Introducing morphology, Cambridge, 2003.
3. **Haspelmath M., Sims A**., Understanding morphology, London, 2010:
4. **Spencer A**., Morphological theory: an introduction to word structure in generative grammar, Cambridge, 1991.

REFERENCES

1. Avetisyan Yu., Zhamanakakits hayots lezu. dzevabanut'yun, Yer., «Zangak» hrat., 2024